ԿԱՐՍ. Ա.-Բ. Ց.—Ստացել ենք «Այր Աստուծոյ Միշան» և «Քրիստոս յարեաւ». կկարդանք և խմբագրութեանս որոշումը կյայտնենք։

ՂԱԶՎԻՆ. Պ. Ա. Ց.—Ստացանք ձեր բանաստեղծութիւնները. կարդացէ՛ք վերևի պատասխանը։

ՄՈՍԿՈՒԱ.—Լազարեան ճեմարանին Արևելեան լեզուաց.— Ստացանք Ձեր ուղարկած յայտարարութիւններից մի կապոց, որոնք վերաբերում են Էմինեան ազգագրական ժողովածուին։ Հետաքրքիր է իմանալ, ի՞նչ նպատակով է ուղարկուած մեզ յայտարարութիւնների ծրարը. եթէ տարածելու համար՝ հապա ի՞նչպէս դպրոցի վարչութիւնը խտրութիւն է դնում հայ թերթերի խմբագրութիւնների մէջ և մեր թերթին երբէք ոչ մի օրինակ իր հրատարակութիւններից չէ ուղարկել ծանօթանալու այն հրատարակութիւններին, որոնց յայտարարութիւնները ուղարկում է մեզ՝ ձրիաբար տարածելու։

ԲԱԳՈՒ.—Լևոնեանին. ստացանք. կկարդանք և կպատասխանենք։

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- Օրացոյց ս. Էջմիածնի 1908 թ. Մայր Աթոռից.
- Албертъ Вандаль. Армяне и турецкія реформы, пер. съ фр. М. Алавердянцъ, Спб., 1908.
- Վարկատու ընկ. կանոնադրութիւն, փոխ. Գ. Ենգիբարեան, Բագու 1907 թ. գ. 30 կ.
- Ն. Վ. Մէլիք-Թանգեան, Հայոց եկեղ. իրաւունքը ը. գիրք. կազմակերպութիւն և կառավարութիւն. Շուշի, 1907 50 կ.
- Բ. Իշխանեան. Թիւրքիայի ապագան, Թիֆլիս, 1907 10 կ.
- Իսրայէլ սարկ. Քնարիկ, ժողովրդ. ձայն. երգեր, տեար տ. Վաղարշ. 1907 15 կ.
- Ա. Հայկունի, ժողովրդական առակներ, Վաղ. 1907 30 կ.
- Կրթութեան բարեկամներուն, Լօզան, 1907.
- Մ. Ջմշկեան, տարեցոյց 1908 Թիֆլիս, 30 կ.
- Տեղեկագիր և հաշիւ Բագուայ Հայոց Կուլտուր. միութեան 1906—7. Բագու 1907.
- Լևոն Վարդ. Հին Նախիջևանի նպաստամատոյց մասնաժողովի հաշիւները, Վաղ. 1907
- Ներսէս ք. Տէր-Կարապետեան. Յարութիւն մարդկան, բ. տպ. Թիֆլիս, 1908 10 կ.

- Ընդարձակ օրացոյց ս. Փրկչեան հիւանդանոցի հայոց 1908 թ. Կ.-Պոլիս.
- Մինաս Բերբերեան. Գրական ակնարկներ. Պերճ Պռօշեանց. Վաղ. 1908.
- Կանոնագիր գիւղական կամ ընկերական շտեմարան-թանկարանի. Սպբ. 1907 2 կ.
- Թէոդիկ. Ամենուն տարեցոյցը 1908 ը. տարի. հրատ. և տպ. Վ. և Հ. Տէր-Ներսէսեան. Կ.-Պոլիս 10 ղրուշ.
- Լ. Մ.-Ա. Իմ պատասխանը բարոյապէս ընկածին. Թիֆլիս 1908.

---

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


**1908 Թ. ՍԿԶԲԻՑ**

Թիֆլիսում կը հրատարակւի

## ԳԵՂԱՐՒԵՍՏ

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ

Պատկերազարդ հանդէս

(Ամսագիր)

«Գեղարւեստի» գիրքը լինելու է մեծադիր, քառածալ (in quarto), նման եւրոպական գեղարւեստական առաջնակարգ հանդեսներին. ծաւալը իւրաքանչիւր գիրքը 100 երես երկէջեան. առանձին եղող նկարները գունաւոր. կլիշէները պատրաստւում են Լայպցիկում և Պետերբուրգում. Թուղթը ընտիր տեսակի, տպագրութիւնը կարելւոյն խնամքով և շքեղ:

Աշխատակիցների անպայման վարձատրութիւն

Տարեկան բաժանորդագինը 10 րուբլի:

Արտասահմանի բաժանորդների համար 30 ֆռանկ:

Կարելի է վճարել մաս-մաս. իւրաքանչիւր գիրքը հատավաճառ 1 րուբլի 50 կ.

Օտար քաղաքներից՝ Тифлисъ, Редакціи «Гехарвестъ»,

Խմբագիր-հրատարակիչ՝ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆ

---

Բացւած է 1908 թ. բաժանորդագրութիւն

## XXVI-րդ ԱՂԲԻՒՐ ԵՒ ՏԱՐԱԶ XIX

Հանդէսները կը հրատարակւեն 1908 թ. այնքան №№, որքան կը թելադրէ հայ վճարող բաժանորդների թիւը: